«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1901

«10» 10 2019թ.

<<Դայմոնդ Մեդ>> ՍՊԸ-ի տնօրեն
Յուլիանա Պետրոսյանին
/ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 49/1 բն. 29/

Հարգելի տիկին Պետրոսյան.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի (այսուհետև՝ Համալսարան) և <<Դայմոնդ Մեդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ Կազմակերպություն) միջև 2019 թվականի ապրիլի 04-ին կնքված <<Բժշկական նշանակության ապրանքների մատակարարման>> թիվ <<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ-4>> պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Կազմակերպությունը պարտավոր էր Համալսարանի կողմից պահանջ ներկայացնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պահանջում առկա ապրանքները՝ համապատասխան քանակներով: Պայմանագրի շրջանակներում <<Դայմոնդ Մեդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 05.06.2019թ.-ին ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 1-ը, և 18.06.2019թ.-ին ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 2-ը, որոնց մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ համապատասխանաբար թիվ 1 պահանջի համար 24.06.2019թ.-ը, թիվ 2 պահանջի համար՝ 07.07.2019թ.-ը, սակայն Կազմակերպության կողմից մինչ օրս՝ 10.10.2019թ.-ը մատակարարվել է թվով 8 հատ <<Միզածորանային ստենտ հակաբակտերիալ, Bioteq>> (5 հատ մատակարարվել է 17.07.2019թ.-ին, 3 հատ՝ 15.08.2019թ.-ին, որի ընդհանուր արժեքը կազմել է 112000 (մեկ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ):

Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծված Պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.09.2019թ.-ին պատշաճ կերպով մատակարարումներ չիրականացնելու մասին ծանուցվել է Կազմակերպությանը և տրվել է 5 օրացուցային օր ժամկետ՝ մատակարարումները մնացորդային մասով իրականացնելու համար, սակայն սահմանված ժամկետներում մատակարարում տեղի չի ունեցել:

Համալսարանի ռեկտորի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 01-ին գրավոր սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2019 թվականի հոկտեմբերի 04-ը ներառյալ, որի

0003882

վերաբերյալ պատշաճ եղանակով իրականացվել է տեղեկացում Կազմակերպությանը, սակայն նոր սահմանված ժամկետներում նույնպես մատակարարում տեղի չի ունեցել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետը՝ Համալսարանը 2019 թվականի հոկտեմբերի 10-ից՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է 4870000 (չորս միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք նաև, որ <<Դայմոնդ Մեդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից կգանձվի պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց (տուժանք) 487000 (չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամի չափով (<<Հայբիզնեսբանկ>> փակ բաժնետիրական ընկերություն, հաշվեհամար՝ 11500166513800):

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ **Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**